

ՀԱՍՏԷ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE

ԱՐՇԱԼՈՅՑ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԳԻՊՑՈՍ

Տարեկան 40 Եղ. սպ. վեցամսայ 20

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 12 Եր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԲ ՕՐԵՐԸ

Ապահով բաժանորդագրութիւն չի ընդունուիր .

Ծանուցումներ մասնաւոր պայմաններով կ'ընդունուին . Ձեռագիրներ եւ չեն տրուիր .

ՔՔԲ 27

ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳԻՐ ԵՂՎԵԷ ԹՈՐՈՍՅԱՆ

Արտոնաւոր եզրկապակաւ կառավարութեան

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԵՏ ՄԻՆԱՍ ԵՐԻՆՅԱՆ

ՔՔԲ 27



MAISON DU KHEWIVE

CABINET

GRAND MAITRE DES CEREMONIES

N°

Palais d'Abdine

le 15 Janvier 1911

Cher Monsieur,

Il m'a été honneur de soumettre à Son Altesse le Khéwive le numéro du journal "Archalouyce" avec les souhaits de la Direction à l'occasion de l'anniversaire d'avènement au Trône de Son Altesse.

Sensible à ces marques de dévouement Son Altesse me charge de vous remercier et pour votre aimable envoi et pour le dévouement que vous manifestez par des vœux de bonheur et de prospérité au profit de Son auguste Personne.

Veuillez agréer, Cher Monsieur, l'assurance de mes meilleurs sentiments Le Grand Maître des Cérémonies

Chirjouglisak

Ն. Բ. ԽՏԻՎԻՆ ԶՆՈՐՃԱԿԱԼԵԱՑ ՆԱՄԱԿԸ

1911 Յունուարի 15 Թերթիս Տնօրէն Տիար Եղիշէ Թորոսեանի (Recommandé) յրկուսով Իր Գահակալութեան 1914 Տարեկալին առթիւ . « Արշալոյս » թերթի քննարկութեան յրկուսով շնորհաւորական նամակին ի պատասխանի .

Ն. Բ. ԱՊՊԱՍ ԶԻԼՍԻ ՓԱՇԱ Բ. ԽՏԻՎ ԵԳԻՊՏՈՍԻ

ՈՐ 1914 ՅՈՒԼԻՍ 25 ԻՆ 4 ՊՕԼՍՈՑ ՄԷՋ ՈՃՐԱԳՈՐԾ ԳԵՆԱԿԵՐՈՒ ԶՈՂԸ ԵՂՎԷ ԹԷԷԻ . ԲԱՅՑ ՎՏԱՆԵԷ ԶԵՐԾ ՄԵԱՑ .

ԿԱՅԾԱԿԻ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ սուրբ, տարածուեցաւ բոլոր ճգնաժամի մէջ, հարուստին պայտը եւ աղքատին խրճիթը Ն. Բ. Ստիլին Վեհափառ անձին վրայ գործ դրուած զգայացունց եւ քստմեղի մահափորձին բոթաբեր լուրը . Ոճրագործը տեղի ու տեղը սպաննուած է իր չարագործութեան թելադրիչներուն մասին առանց բառ մը իսկ կարենալ արտասանելու . սակայն Օսմ . կառավարութիւնը որ ըստ ամենայնի պատասխանատու է այս չարաշուք ոճրափորձին եւ նգիպտական կառավարութիւնը որ իր սիրեցեալ եւ Օգոստափառ Վեհապետին նուիրական կեանքը պաշտպանելու ընդ միշտ պարտաւոր, անտարակոյս իրենց ճշմարիտ դերերուն մէջ պիտի գտնուին, մահափորձին հեղինակները լուսոյ ներքեւ զննելով արժանի պատիժներ տնօրինել . Հոս տեղի է որ Նորին Բարձրութեան Օգոստափառ անձին վրայ գործուած ոճրափորձին մեր վրայ ըրած տխրագին տպաւորութիւնը ցայտուն կերպով արտայայտելու եւ Նորին Բարձրութեան Ժողովրդասիրական առատապարգեւ զգացումները

անխտելի կերպով ապացուցանելու համար . ի վերեւ հրատարակենք իր մէկ շնորհակալաց նամակին ԲՆԱԳՐԷՆ Զինկոյի վրայ առնուած Լուսատիպը, որուն ԲՆԱԳՐԷՆ թէեւ չարագործներու կողմէ ՅԱՓՇՏԱԿՈՒԱԾ է մեր ձեռքէն, ուրիշ կարգ մը ամենակարեւոր Տօգիւնան ներու հետ, սակայն մեր Սիրեցեալ Վեհապետին ԱՐՇԻԻՆԵՐը բարձրաձայն պիտի խօսին բնականաբար ի հարկին . . . .

A PROPOS :- Ի հանդարտութիւն գալթակղեալ մտաց, որովհետեւ միաքեր գալթակղեցնող բուններն ալ թիւով շատ են, պէտքը կայ յայտարարելու թէ՛ անցեալ երկուշաբթի օրը 27 Յուլիս 914, թէեւ « Արշալոյս » Տպարանը առժամանակեայ կերպով հաստատուած Տնօրէն, Շարա Մուհամմէտ Ալի, Հարթ էլ Մատապէկ էլ Գատիմէ թիւ 40ի յարկաբաժիններէն մէկուն մէջ ոստիկանական խուզարկութիւն մը տեղի ունեցած է, բայց այդ խուզարկութիւնը « Արշալոյս » թերթին եւ զայն յարաբերող անձերուն հետ բնաւ երբէք առնչութիւն չունի եւ չկրնար ալ ունենալ, որովհետեւ « Արշալոյս » Արտօնուած է նգիպտական կառավարութեան, եւ իր սահմաններէն դուրս անկարգութիւններ ընելու ո'չ յատկութիւնը ունի, ո'չ տրամադիր է, եւ ո'չ ալ տրամադրելի կրնայ ըլլալ : Ասիկա թող լաւ գիտնան մեր բոլոր բարեկամները ու հակառակորդներն ալ միանգամայն .

ԵՂՎԵԷ ԹՈՐՈՍՅԱՆ

# ԽՕՍՔԵՐ, ԱՌ ԹՈՐԳՈՄ ՍՐԲԱԶԱՆ

Եգիպտոսայ զարթոնքի անդ-  
րանիկ պտուղն էք դուք Սրբազան  
հայր, և Եգիպտոսայ գծեզ կոչե-  
լով իր առաջնորդական խեղճուկը-  
րակցած աթոռին, ցայտուն ապա-  
ցայցը տուաւ որ, իր այս անգամի  
ընտրութիւնը՝ նախորդներէն բոլոր-  
րովին տարբեր, գիտակից եւ ու-  
ժեղ ընտրութիւն մըն է, ինչ որ  
իւր ազգագրաւ առաջադրութեանց  
հիմնական ոգին կ'արտացոլացնէ:

Այս անգամի ընտրութիւնը  
յանձին ձեր Սրբազնութեան, ո՛չ  
պատահականութեան ծնունդ է, ո՛չ  
աղայական հաւնութիւն արդիւնք, և  
ո՛չ, ալ որոշ խմբակի մը ինքնիր  
մէջ ըրած աճելէ քերթիպ մէկ բա-  
նը:

Ձեր Սրբազնութիւնը ընտրող-  
ները այս հեղ աջակցեցան շատ  
մտածել, քրտնել, պրպտել ու  
քննել, և երբ բոլոր այդ տքնու-  
թիւնները միահամուռ եկան հա-  
ւաքուեցան ձեր շնորհազարդ գըլ-  
խուն վրայ, այդ ալ կը նշանակէ  
անշուշտ թէ՛ անվիճելի արժանիք  
մը և արդիւնաբեր ոգի մը կը կրէք:

Յակայն կ'երևակայեմ թէ՛ որ-  
քան դժնդակ, մտածեցնող և պա-  
տասխանատու կացութիւն մ'է ձե-  
րը, Սրբազան հայր:

Միակողմաբար ընտրուող մը,  
ինչպէս ձեր նախորդները, իրմէ  
դուրս կրթնելիք կէտ մը կ'ունենայ  
ի հարկին. բայց երբ մէկը ձեր Սր-  
բազնութեան պէտ ժողովուրդի մը  
լիապիտո համակրանքը լով ունի իր  
առջին, այդ ալ կ'ենթադրէ որ,  
ինքնիրմէն դուրս, իր կարողու-  
թիւններէն զատ, ոչինչ ունի այդ  
անձը կրթնելիք իր ասպարէզին մէջ:

Կրնայ դիւրաւ ըմբռնուել որ,  
ամենափոքր գայթակմ մը ո՛րքան  
քրթիթեական կը դարձնէ կացու-  
թիւնը:

Եգիպտոսայ իրականութեան  
այնպիսի մէկ փրփրած ու բոլորո-  
վին պարապ շրջանին պաշտօնի կոչ-  
ուեցաք Սրբազան Հայր, որ ժող-  
վուրդը աչքերը ձեզ յառած՝ ամէն  
բան՝ ձեզմէ կ'սպասէ. դուք էք որ  
պիտի լեցնէք այդ պտրսպը, տի  
յապեցնէք այդ ծարաւը, պիտի  
իբրդործէք այդ պաթկացող, շըր-  
վէժող ժողովրդային փափաքը, և  
իրաւամբ, քանի որ առ այդ կոչ-  
ուած էք:

Ամէն մարդ քննադատ կտրած  
է սա պահուն. ձեր Սրբազնութեան  
է՛ն պղտիկ ժէսթը, աննշան մէկ  
բայլը, խօսքը մազ մազէ կ'անցուի:

Այս բարբէն սակայն շեմ կար-  
ծեր որ ա՛յնպէս ենթադրէք թէ՛  
մէկ անգամէն կ'ակնկալենք ձեր  
Սրբազնութեան ամէն բան. բնաւ  
երբէք. գիտենք որ Եգիպտոսայ  
գարաւոր ժանգը մարբել՝ օրուան  
մը, ամսուան մը, տարուան մը  
գործ է, բայց, կամաց կամաց գոր-  
ծի սկսիլն ալ լաւ է, չէ՞ Սրբազան:

Հայր, երբ տակաւին մութին մէջ  
գործել վարժուած հակընդդէմ ու-  
ժերը ի վիճակի չեն սարքելու հին  
խաղերը:

Վստահ կրնաք ըլլալ Սրբազան  
Հայր, որ այդ ուժերը երբէք չեն  
մտքերնէն անցնելու սպասել որ, ձեր  
Սրբազնութիւնը նայինք ի՞նչ պիտի  
ընէ, որպէս զի իրենք ալ յետոյ  
ըստ այնմ շարժին. երբէ՛ք, անոնց  
մեքենան յարատե կը գործէ, գի-  
չեր ցորեկ:

Ուրեմն՝ մթառուներ սալօններու,  
մութ պիւռներու այդ մեքենան՝  
իւր խժալուր ճրգրատողը չսկսած  
լսելի ընել տալ մեզ, առ ձեզ մի-  
ացած ժողովուրդի ձայն մեքենան  
թող սկսի գոռալ բաց երկնքի տակ,  
ամենուն աչքին և սրտին դիմաց:

Բայց այդ մեքենան կը սկսի  
բանիլ ու գոռալ այն առնէ. երբ  
հայրենաւանդ նշխար Ազգային Սահ-  
մանադրութիւնը ազատուի իր կա-  
պանքներէն:

Փութկոտ գտնուեցէք Սրբազան  
Հայր ազատելու այդ բանտարկեա-  
լը է՛ն առաջ. Մի՛ խաբուիք ձեր  
շուրջը սփռուած ձեզ կանուրթիւն-  
ներէն և աչքի փոշիէն, ինչ որ կը  
լսէք ու կը տեսնէք այդ անունով՝  
չահագործում և պատրանք է միայն:

Իրիչս առաջ չերթար ամբաս-  
տանել ամբողջ Եգիպտոսայ հա-  
մայնքը և ըսել թէ հոս, մեր պա-  
րիսպներուն տակ մեռցուցած է զայն  
բայց շատ հեշտօրէն կրնամ մտա-  
նանշել իր այն դատապարտելի ան-  
տարբերութիւնը, որով թոյլ տը  
ւած է որ կարգ մը բարեխղճներ  
զայն ամուրթեան մատենն և իզի  
քօզու պէշխիզ ընեն:

Անգամ մը որ վերակենդանա-  
ցնէք այդ նայի պատանին Պէյն էլ  
Սուրէնի ու Ապու Տարտարի տար-  
տարուէն, անկէ ետք ամէն բան կը  
դիւրանայ:

Երկրորդ կարևոր կէտ մը ևս  
Սրբազան Հայր, Եգիպտոսայ կըր-  
թական հարցին, ԲԱՆԿՐԷՆԱ գար-  
ձած այդ նեխանքին անմիջական  
մաքրագործումը:

Դուք, իբր տարիներու հետե-  
ւող մը կրթութեան, մէկը անոր  
անխոնջ մշակներէն և անձնուրաց  
աւակիրներէն, դուք կ'ըսեմ Սր-  
բազան Հայր, թոյլ չպիտի տաք,  
ու պիտի ծառանաք ձեր ամբողջ  
կորովին ուժգնութեանը մէջ, որ-  
պէս զի Գալատեան և Պօղոսեան  
Չահրը՝ մէյմէկ Իստոն Էիթիոպի  
խեղճութիւնը ա՛լ չչարուհակեն ցու-  
ցադրել մեր աչքին:

Բաւական է օրհնեալ խարազա-  
նը և կամ աւելը ձեռք տուէք Սր-  
բազան Հայր, ու բիւրիցս սուրբ այդ  
սրբազան վայրերէն դուրս վանեցէք  
խասապ, եճմէնիճի, պատմաճի հո-  
տող ծթուածութիւնները. հերի՛ք  
որքան անոնք խաղալիկ են դարձեր  
տարիներէ ի վեր պառերու անկիւն-  
ներէն ծնած քմահաճոյքներու, և

# ԱՆԱՆԵԱՆ ԵՂԲ.

ՊԵՐՔԱԿ ԱՐԱՆՅԱ ՅԻ ԿԱՆԱՆՅ  
ՇԱՐԱ ԷՄԱՏ - ԷՏ - ՏԻՆ, ՍԱՆ ԺԱՂԵՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մախուր, առագ եւ երաշխաւորելի եւն մեր պատրաստած ԳՕՍ ԹԻԻՄ.  
ՆԵՐԸ ամեն անոնց համար, որոնք կողմն ճաշակաւոր հագուստներ ու-  
նենալ, Չախաւոր գ, Անրով:

անոնց շքովը շքաւորացած խեղճ ու  
կրակութիւններու, որոնց ձեռքէն  
վկայականներն առնել պատուելով՝  
Կեդրոնի Ուսումնական Խորհուրդը  
է՛ն մեծ խեղճ ըրած կ'ըլլայ այս  
խեղճ Ազգին:

Այդ երկու վարժարաններուն  
պիւտեճովը Եգիպտոսայ իր անու-  
նը համալսարանով մը կրնայ պան-  
ժացնել, մինչ անոնց ներկայ իրա-  
կանութիւնը որակելու համար բա-  
ռը կը պակտի դժբաղդաբար բա-  
ռամթերքիս մէջ:

Խիստ եղէք, Սրբազան Հայր ձեր  
անաչառ ոգիին գործադրութեանը  
մէջ:

Կալուածոց Դիւանին մէջ գոր-  
ծուած պղտիկ զեղծում մը երևան  
հանելիք եկած օրերնէդ իսկ, մեծ  
հաճոյքով լեցուց մեր սրտերը.  
այլ այդ զեղծումին պատասխանա-  
տուներուն հրապարականախատ չի  
ըլլալը յօրինակ այլոց, մեզ այն-  
պէս ենթադրել տուաւ թէ՛ ձեր գը-  
լտոտ սիրտը շուքեց իր գործունէ-  
ութեան հիմնաքարը շառաչուն ապ-  
տակով մը օծել նախապէս:

Եւ մենք ամէն յոյս ունինք  
որ, ձեր Սրբազնութիւնը չ'պիտի  
ընկրկի ոչ մէկ պարիսպի և ոչ մէկ  
ընդվզումի առաջ, այլ պիտի ցըց-  
ուի ծառանայ, կունակը ժողովուր-  
դին, երեսը ասպարէզին:

ԴԻՄ - ՀՕ.

Օր մ'ալ եկար. « Երթա՛նք ըսիր  
մայրիներու մութ շուքին տակ. » Զմեր-  
ժեցի առջարկդ, ու կողքիդ քալեցի  
լուս. բայց երբ Մայրիներու ծոցէն սա-  
հող անուշ սիւզը շոյեց գէժքերին ու  
անցաւ, ըսիր. « Կը սարսափեմ Մայ-  
րաստանէն. երթա՛նք հետու, լուսնի  
արծաթ շողերուն տակ. ժայերու վրայ  
սէր երգենք » - Երթա՛նք ըսիր ու հետե-  
ւեցայ քայլերուդ . . .

Սեւ ժայերու ստորտը երբ հա-  
սանք, « Հոս վիշապի՛ր գազաններ կան  
երթա՛նք հետու դաշտը՝ վայրի շուշան-  
ներով գորգարուած կարկաջահոս աղ-  
բիւրի մը եղերքը սէր երգենք. » Հա-  
մակերպած քալեցի քովէդ լուս ու ան-  
խօս . . .

Դաշտին վայրի շուշաններով պըճ-  
նուած աղբիւրի թիւրեղէն երբ ուժայ մը  
առիր, « Փախելք ըսիր հոս մահ կայ.  
Երթա՛նք հետու, գաշտերէն դուրս, շա՛տ  
հետու. . . » Երթա՛նք ըսիր հետու՛ն. դաշ-  
տերէն դուրս շատ հետու՛ն մեր վկայի  
թեւերուն տակ երգենք տաղ մեր սի-  
րոյ, Շանթահարուած այս խօսքէ՛ս՝ դող-  
դոջ քայլով մը հետեւեցար քայլերուս:

Կը քնածար մեր լուս վըկայ  
ձեր Մայրին, լուսնի պայծառ ու գըղ-  
ուող նեւերուն տակ անվրդով:

— Երգենք ըսիր:

Բայց գուն ապշած նայեցար ինձ  
շատ եկար . . . եւ արշալոյսի պարիկները  
երբ եկան երգել, պարել մեր շուրջը,  
« Հետու, հետու գնա ըսիր իմ քովէն,  
ես ոչ սէր ունիմ ոչ երգ. . . »

Լեքցի՛ր զիս, բայց յուսախար չե-  
ղայ ես . . .

ՎԱՂԱՐՇ

## ԼԲԵՑԻՐ ԶԻՍ . . .

Մայրիներու զով շուքին տակ, կը  
իչես չէ՛, այն գողարիկ ու սուրբ պոչը,  
երբ գուրս ձեռներուս մէջ, կրկար կը-  
կա՛ր դիտելով կապոյտ աչքերդ՝ ըսի,  
Դարաւոր Մայրին վկայ տալով թէ՛ « Ա-  
չերէդ կը կսակածիմ. հո՛ն սիրոյ կայ-  
ծը ասուպի մը փայլն ունենալ կը թը-  
ուի ինձ . . . »

Հեզնեցիր զիս ու խնդացիր. կոյս  
չրթներուս արտասանած այս մեծ խօս-  
քը ապուշ անիմաստ նկատեցիր ու ը-  
սիր. « Թո՛ղ նոյն այս Մայրին ըլլայ  
վկայ թէ՛ աչքերս ալ սրտիս նման կը սի-  
րեն քեզ . . . » Ու մտեցար սեղմելու  
սիրտս սրտիդ վրայ. բայց ես՝ « Հետու  
հետու ըսիր, թոյլ տուր որ կապոյտ ա-  
չերուդ անգամ մ'ալ նայիմ . . . »

Հեզնելով խնդացիր դարձեալ, երբ  
վերստին ըսի քեզի թէ՛ « Աչերուդ կա-  
պուտութեանը մէջ սիրոյ կայծը ասու-  
պի մը փայլն ունենալ կը թուի ինձ. . . »

Ննդացիր, բայց գիտեմ. մատաղ սիր-  
տդ զեղասելի վէրք մը ստացաւ. ու բա-  
ժանումի պահու՛ր դարձեալ անուշ ու  
վիրաւոր շնչով մը ըսիր. « Կը սիրեմ  
ու ապացոյցներս պիտի տամ քեզ . . . »

Վշտացած գէժքդ ուրախութիւն մը  
տուաւ ինձ, ու ես հանգիստ, գո՛հ սրտով  
մը տուն քաշուեցայ վերջալսոյս շողե-  
րուն հետ . . .

## Ա.Ձ.Գ.Ա.ՑԻՆ

ԺԱՄՍՏՈՅՑ - ՏՆՕՐԷՆ  
Լուր կը շրջի թէ՛ Պ. Ա. Նաւար-  
եան, Հայոց Ազգ. Գալստեան Վարժա-  
րանի հապճեպով մեկնող Տնօրէնը, իր  
պաշտօնեաներէն մէկուն ոսկի ժամա-  
ցայցը ճեպը մոռցած է՝ անտարակոյս  
հապճեպով մեկնած ըլլալուն համար . . .

Դարձեալ լուր կը շրջի թէ՛ Վար-  
ժարանի գրեթեակա պիտոյքներէն 1914  
տարեշրջանին գոյացած հասոյթները՝ 52  
ոսկիի չափ, անհետացած է խեղճ Գա-  
լստեանի դարակներէն — ի ծնէ անբաղդ  
դարակներ. . . — Եւ չի զիտուել թէ  
որ ճեպը գնացած է հապճեպով . . .

Բայց քանի որ վարժարանը Հոգա-  
բարձութիւն մը ունի՝ — անոր անգամ-  
ներուն բարոյականը մի առ մի քննելու  
ատենը չէ հիմայ — եւ քանի որ Տնօրէն  
Նաւարեան Հապճեպով մեկնած է. նախ-  
կին Տնօրէն Տիար Մ. Մալեանին պէս  
ոսկիներու կոտորները գրպանած, այդ-  
հայեաներէն շարժած գուրքած ներուն  
հետքերը կոտորուելու համար անշուշտ  
ուրիմն՝ եթէ ստոյգ է որ Վարժարանին  
52 ոսկիներն անհետացած են, պատաս-  
խանատուութիւնը կը ծանրանայ Հոգա-  
բարձութեան՝ անկէ ալ Գաղ. ժողովին  
վրայ . . .

Ոստի կասկածելի Հոգաբարձու-  
թիւն մը պէտք է որ անպայման եւ ան-  
միջապէս հրաժարի, եւ մինչեւ որ ինք-  
զինքը արդարացնէ՝ գործնական զեր  
չուենայ վարժարանին մէջ. Այս է օ-  
րէնքը:

# ՄԱԼԷՇԻՆ ԲԱԺԻՆԸ

(ՌԱՌԻԼ - ԲՕՆՇՕՆԷՆ)

ԱՅՆ ԵՐԿԻՐԸ ՈՒՐ ԵՍ ԿՍՊՐԻՄ

Յիրաւի մեծ անիրաւութիւն մը և ապերախութիւն մը պիտի ըլլար, երկու տարի Զակաղիկցիներու օգը ծծելէս և շուրջ խմելէս վերջը, բերանս կ'զգէի և տող մը բան չգրէի վրանին... Արմենակ Մէօ. թէմէտեան բարեկամիս պէս:

Անունէն դատելով՝ ճերէ քնիտ, ծուռիկ մուռիկ տեղ մը կը կարծէք թերևս Զակաղիկը, որը կը ճանչնաք Պաւլոս Այրէսի կամ Սոհան նէսպուրի չափ:

Բայց նախ ըսեմ թէ՛ ներսով դուրսով տափակազոյն քաղաքն է տեսած քաղաքներուս մէջ այն երկիրը ուր ես կ'ապրեմ այսօր, և ուր աւա՛ղ, նարնջաճաղիկը չէ որ կ'ապրեմ Երեսփ. Ժողով մը, կամ աւելի ևս ցուցահանդէս մը Անատոլիոյ գաւառներու, և Ռուսիոյ սարերու, ամէն անկիւնէ փրթած 1-2 հոգիի կը հանդիպեք անպատճառ:

Իմ Զակաղիկցիներս այնքան բարի և ազգասէր են, որ հոգիներն կուտան Ազգին համար, անշուշտ քրտակներն ալ կուտան:

Տեղը գիւղ է թէև. բայց մէջիները բնաւ գիւղացի չեն, չորս հոգի Բիւզանդիոնի, ժամանակի բաժանորդ կայ նէ, տասնը չորս հոգի ալ Եւրոպական մօտայի թերթերու բաժանորդ է, խնդիր է միայն գիտնալ թէ՛ այդ մօտաները ովքեր կը հագնին, ե՞րբ կը հագնին, և ո՞ւր կը հագնին:

Զակաղիկցիները ունին վարժարան մը, որուն վրայ կը գուրդուրան, պղտիկ պղնձակի մը իր պէսպէսին վրայ գուրդուրաւուն պէս:

Այս վարժարանը ունի 5 աշակերտ, վարժուհի մը, տնտես մը, 5 հոգաբարձու և 55 ալ պահեստի հոգաբարձու, որոնք ամէն վայրկեան կ'աղօթեն որ միւս հինգ անմահներուն բան մը ըլլար տէ իրենք անցնէին տեղը:

Զակաղիկի համերաշխութեան և խաղաղութեան հրեշտակը վիսքիթ օրհնեալ գաւաթն է, որու մասին խորին ակնածանք և անկեղծ սէր կը տածէ Զակաղիկցիին:

Բուէ, օրակարգ, ծրագիր, որոշում, ամէն բան այդ պտուղիկ գաւաթին մէջն է:

Ձրանասցիները երգով կը վերջացնեն ամէն բան, բայց որովհետև Զակաղիկ զուրկ է պատերէ և թէնօններէ, անոր համար ատենք ալ վիսքիթով կը վերջացնեն ամէն բան:

Անշուշտ 2-3 տարիէ ի վեր ինծի պէս երեքմէ գուրք ալ կ'իմանաք որ այս երանելիները միտք ունին եկեղեցի կառուցանել, սակայն՝ ցարդ չկառուցուելուն պատճառները չասեն:

Ոմանք կ'ըսեն որ եկեղեցին և վարժարանը անհատապէս կառուցանելու համար տեղւոյն հարուստները մրցումի ելած են իրարու միջև:

Ուրիշներ կ'ըսեն որ, ամէն մէկ Զակաղիկցի կը փափաքի եկեղեցին և դպրոցը իր տունին քովի կը ունենալ... հաւնոցի պէս, որպէս զի պատուհանը նստելով կարելի ըլլայ մասնակցել արարողութեանց:

Հոգիներ ալ կան որ, մարդիկը ներշնչուած Յուսարեհի մէջ վերջերս երեքած Անիի անտակները:

անուն խիստ շահեկան ուսումնասիրութենէն, միտքերնին գրեր են կամ բնաւ եկեղեցի չունենալ, և կամ ունենալէն ետքը՝ հազար ու մէկ հատ ունենալ:

Զակաղիկցիներու գերեզմանատունը խրեախ է, օգասուն և բացօգտայ, անանկ որ սիրայօժար պիտի ուզէի երթալ հոն պառկել օր մը, եթէ կարելի ըլլար շուք տեղ մը գտնալ, դժբաղդաբար հոն պառկող բարերարներն անգամ արեւազարկ եղած են, քար չկայ չկայ վրանին, շուք ընող տերեւ մըն ալ չկայ, որով, նախ քարը դնելու է՝ ետքէն պառկելու է. խելացութիւնը աս է ըստ իս:

Երբեք միտքէս չէի կրնար անցնել, որ օր մը Զակաղիկի անկիւնը պիտի հանդիպեմ հոյ մը ազգասէր հայուհիներու, որոնք քար կը հանեն Անգլիոյ սուրբ Ժեօնիոյ:

Այսօր բոլոր Զակաղիկցուհիները ոտք ելած են վարժարանին խրանակալուհի ըլլալու համար:

Ի՞նչ մեծ յեղաշրջում հայ կրօնով կեանքին մէջ, որը վարժուած էինք ցարդ՝ ոտք ելած տեսնել զխարկի մը, կարգուհալու, կամ օգափոխութեան համար:

Բոլոր հոգուովս կը ծափողունեմ ազնիւ Զակաղիկցուհիները իրենց այս աննախընթաց ժեսթին համար, և իրու ալ ամէն հայուհի բերնին պատառը չէ Աւստին Տեսնութիւնը թողլով Կարոյի Տըն. տեսութեան ետեւէ վազել:

Վերջապէս, ամէն բանը ազգէ է, այն երկրին, ուր ես կ'ապրեմ այսօր... Կունծիկ Աբեղայի Սուրբատուրը կենցաղը. օգը, շուրջ, մարդիկը, կեանքը լաւ, պաշտելի խնկելի, միայն թէ...:

Եւ այս «Միւլն թէն չի բացատրուիր, հասկնալ, ըմբռնելու համար. կը բաւէ արկածով երկու գիշեր Զակաղիկ պառկելու ստիպուիլ:

## Չ Բ Մ Ե Ղ Ա Ն Ք

Ն. Բ. Խտիվին Վեհափառ անձին վրայ Պօլսոյ մէջ գործադրուած անակնկալ և անիծապարտ մահափորձին պատճառաւ, թերթին նիւթերը փոխել պարտաւորուած ըլլալով, մեր նախորդ թուով ծանուցուած նիւթերէն մէկ քանին յառաջիկայ թիւերուն յետաձգուեցան:

ԱՐՄԷՆ ԳՕՆԻՍ ԸԸ ՄԷՆՄԷՆԻ  
ԴԷՊՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Հօգերու եւ վեթեմանքներու ետեւէն (եթէ ասոնք ալ փանիսլամիզմի փրօփականքը ընել ընդունելէ առաջ կարենան մեկնել) Արմէն Բօնի յը Մէթմէթի սոյն կարաւանը դէպի Հայաստան, բան մը չի՝ գրուցեր ձեր սրտին, ո՞վ եղբայրս հայր:

Ոչ Հավաս ըլլալու պէտք կայ, ոչ ալ Արուստակալի՝ ի վեր հանելու համար այն ազգագուտ շունչը՝ որ այս կարաւանը պիտի սփռէ Մայր Արաքսի կուրծքին:

Ո՞վ չի ճանչնար յարգելի Բօնիքը, որ այնքան նշանաւոր դէմք դարձաւ հրեշտակաւ աշխարհին մէջ, իր «դէպի Անի» անուն ուսումնասիրութեամբ

## ՉՈՒԼԱՐԱՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

Փ. ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՈՐԳԻՓ

ՏԱՀԷՐ ՍԱՆԿԱՐ - ԷԼ - ՍՈՒՐՈՒՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՒ 12

Գ Ա Հ Ի Ր Է

Փ. Ռափայէլեան որդւոց ձուլարանին մէջ ամենամեծ խնամով կը պատրաստուին ամէն լեզուէ տպագրական տառեր, իրենց բոլոր տեսակներովը եւ յարակից Մաքրիկներովը:

Փ. Ռափայէլեան որդւոց ձուլարանին տառերը ամենէն կատարելագործուածները ըլլալէ զատ, տեղուսութեան տեսակետով ալ անմրցելի են:

Յաճախորդաց դիւրութիւնը ընծայելու համար, Փ. Ռափայէլեան որդիք, բացի Տահերի ձուլարանէն, Ապտինի Գարագոյին մօտ Գրասենեակ - Վաճառատեղի մը հաստատած են, որուն բացուած մօտաւորապէս տեղի պիտի ունենայ: Ձուլարանի թէլեֆօնի թիւն է 885:

## ՀԵՌԱԳԻՐ

Ն. Բ. ԽՏԻՎԻՆ ՄԱՀԱՓՈՐԸ

Կ. Պօլիս 26 Յուլիս - Ն. Բ. Խտիվի Շարաք օրը (անցեալ Շարաք 2, Յուլիս) իր փեսային ձեռնարկէս փառային հետ Մեծ Եպարֆոս Սայիս Հաշիմ փառայի տուած այցելութեանէն վերադարձիմ, Եգիպտոսի 20-22 օրակալս երիտասարդ մը Մահմուտ Մազհար անունով՝ ռեվոլյուցիոնի 5 հարուստներ պարսկէց անոր վրայ վիրաւորելով Ն. Բարձրադասիւնը աջ անոթէն ևւ աջտէն, ձեռնարկէս փառայ աջ թերթերէն վիրաւորուեցաւ սրունգէն:

Ուսիկան-զինուոր մը՝ որ հոն կը գտնուէր, կրակ քրաւ ունապարծիկ վրայ եւ ապա սուրի հարուստներով անկեղեցան գեղի փոկց գայն:

Ն. Բ. Խտիվի և Նախկանական դարմաններ տրուեցան Առաջին Զօրքանակի դարմանասան մէջ, որ Բ. Դրաւ մօտերը կը գտնուի:

Ն. Բ. Խտիվի ա՛յնպիսի պարախուրներ ևւ հանդարտութիւն ցոյց տուաւ որ կ'արժէ հիանալ իր վրայ:

Մահախորձիմ յուր խոսպիս ազդեց Պօլիս քնակող Եգիպտոսացիներուն վրայ, որով անկիւնի շարքէս Զարգուի Պարսիս փոխառով՝ արսասուազիկ իրենց ցարակցութիւնները յայնմեցիկ ևւ անիծեցիկ դարադիւրները: (...)

Կառավարութիւնը մերապիսեց Մահմուտ պէյ Յէնիմի, Բիւճաք, եւ Տօֆ. Անէէս Ծուսաս անուն անձներ:

Դարադիւրներէն անկեղեց շատ կասկածելի, Ե՛էյի Ապտիլ Ազիզ Շաուիշ երուպս կը գտնուի եղեր:

ԴԷՊՈՒ ՊԱՏԵՐԱՉՄ

Վիեննա 28 Յուլիս - Աւստրո-Հունգարիա Սերպիոյ դէմ պատերազմ կոչակեց:

Վիեննա 29 Յուլիս - Աւստրիական զօրքերը Միքրօվիցայի վրայ կը յառաջանան: Սերպերը ևւ անանջեցիկ:

Լոնսօն 30 Յուլիս - Մեծ Պետրիւնները՝ իրենց բանակները կազմ ու պատրաստ վիճակի մէջ դրուելով զբարձու են:

Ռուսիա Սեր ժոյլուն փարուները մարտի տուած է:

Գեղարկիս հրամաւ տուած է իր մարտաւարներուն, Հիւսիսային ժոյլու մէկ տեղը կտրուանաւոր:

Պերիլեան հասած հետագիւր մը կը ծանուցանէ թէ՛ Պերիլեանի Գերմանիոյ անկախացուցիչը սպաննուած է:

Փարիզէն ստացուած հետագիւր մը ընկերվարական ժողովի քաղաքական շարք կը թերտէ:

Ն. Բ. Խտիվի անողջակալ կացութիւնը խիստ զոհացուցիչ է:

Եւ եթէ բան մը չի հասկցանք մենք անկէ, պատճառը մեր գլուխներուն քառակուսիութիւնն է:

Ներսէս Դանուբ, Դանուբէն Արարատ իր անունը բերնէ բերան եղաւ գերան:

Չուրանաք որ Անիի եթէ ոչ ամբողջական կործանուածը, գէթ փրկուած Մառնրու ձեռքէն իրեն միայն կը պարտէք:

Եւ հիմակ ալ, Տաւրուսէն Մասիս, Զորքիւն Տիգրիս, նոյն անունը պիտի երթայ իր հմայքը եւ քաղկէ սփռուի:

Մի ըսէք թէ ի՞նչ օգուտ կրնայ ծնիլ այս ճամբորդութիւնները Հօֆ մը կրնան ծնիլ տէ, չէ՞ք կարծեր որ յարգելի Բօնիքին ճամբորդութեան տակըն ալ ԽՕՖ ըլլայ:

Շարքիէի բաժնակի եւ արմաւի այս իշխանին լիկ անցնելը կը բաւէ հողերուն կրակի գին մը տալու, եւ ապիկար թուրք պաշտօնէութիւնը իմանի բերելու:

Անշուշտ եմ որ ազգասէր Բօնիք անտարբեր չպիտի գտնուի 30 տարուան աւերին, գուրուսին իր աչքին պարզելիք ցուցադրուին հանգէպ:

Իրերտերու կողմէ գրաւուած հողերը վերագնել եւ հայ գիւղացուց վերադարձնել իրեն համար, Սէնտիքասի պարանանդէսը բացուած չամբանիայի մը գինը կրնայ ըլլալ:

Ինք որ ստաշին հիացողը եղած է նշանաւոր եկեղեցականներու, գրագէտներու, եւ ազգային բարերարներու կեանքին, անոնց հոս հոն ցրուած հողակոյտները չպիտի՝ ուզէ արդեօք գեղեցիկ շիրիմներով անմահացնել:

Աւերուած վանքերը վերանորոգել քանդուած օճախները չինել իրեն համար Զակաղիկի մէջ եկեղեցի մը կառուցանելու հաւատար է:

Չէ՞ որ մեծայարգ Բօնիք էր յերմ կուսակիցն է «Միւլ ինքնԱՊԱՇՏՅԱՆՈՒԹԵԱՆ», արդ, անշուշտ սիրայօժար իր քաղկէ պիտի տրուարդէ Հայաստանի տունը մնացած մեր քոյրերուն:

Ուրե՛մն գնա՛, ով նոր Հայաստանի Արիւնը, գնա՛՛ համբոյրս ճակտիդ:

Պատե՛ք, պօնօւորը կոնակէդ ու անցուր շալվարը հայրենի. նետէ՛, զԵլխարկը Շթանեան ու հազիր Արախիւնը տանն թորգոմեան, հանէ՛, պոթերըն ու ամօրի գուրպաները ոտքերուդ եւ անցուր չարքին ու գուրպանը բրդահիւս:

Գնա՛, հոգի ջան, քօտաքը թելիդ, մատիտը մատիդ, մարթիքը ուսիդ:

Բայց, վերադարձիդ, չմոռնաս հա՛՛ կը վշտանանք ետքը:

Լո՛ստաւոր չի կայրենիք, կեսարենուր կեսարիայէն՝ տէնկ մը փաստրմա, հոտն անուշիկ, չէմէնը վրան:

Շամիրամեան վանայ գեղազուարճ այգեստաններէն՝ չուվալ մը չամիչ ու չոր թուրք:

Ակերու մայր ամիրայածինն Ակնէն պաթման մը չոր խայմախ ու պատեղ, Հայրենի գրախտ անլումանն թախտէն՝ պիւրիք մը վարդօղի թօխացու:

Այսչափն ալ բերես նէ՛ մեր բերնին մէջ տեղ ունի, Հազար մէրսի:

# T I R I N G

ՊԱՎԱՔԻ ՓՈՂՈՑ ԿԱՎԻՆ ՓԱՍՏԱԼ

ՎԱՃԱՎԱՅԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՑ

ԵՂԱՆԱԿԻՆ ԵՎՐՄԱՐԱՍԵՆ ՏԵՍԱԿ ԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՈՒ ԵՆ  
ՓՈՒՔԱՑԻՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պոլսոյ ամենամանօթ թիֆինկ Տան Գահիրէի  
Կարահաստատ Մանածիւղն է .

## ՏՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ.  
ԱՂԵՔԱՆԴՐԻԱ (Եղիպտոս)

Շարժական կանոնաւոր երթեւեկ .  
Միացեալ Նահանգներու , Բա.  
Նատայի եւ Հարաւային Ամերիկա-  
յի համար .  
Գաղթականներու համար չափա-  
ւոր գին :

Աչքի քննութիւնը ճիշտաբար  
կը կատարուի տեղույս մէջ ,  
Մանրախումբ տեղեկութեանց  
համար դիմելու Գործակալութեան .  
ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ  
Հեռագրական Հասցէ — ԼԵՆՕՔՕ  
Փոստարկի թիւ 897  
Թուրքիոյ գաւառներու մէջ  
փոխ - գործակալներ կը փնտռուին

## ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ ԱՂԵՔԱՆԴՐԻԱ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

249 ր թիւ  
Գահիրէ, 26 Յուլիս 1914  
Առաջին պարզեւ

Թիւ	2361	Դր. Ողջ	4000
»	10533	»	400
»	3594	»	200
»	6925	»	100
»	9577	»	»
»	7102	»	»
»	4402	»	»
»	13578	»	»
»	14543	»	»

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70ա-  
կան դրուշ .

190	587	982	1720	1758	3995
4183	4606	4889	5148	5672	5878
7223	7595	7685	7738	7888	7994
8205	8457	8940	10258	10771	
10976	11377	11453	11564	11681	
11809	11889	12498	13254	13366	
13384	13619	13691	13768	14058	
			14173	15014	

## Ա Շ Խ Տ Ա Ն Ո Ց

ԱՐՈՒԵՏՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Օրերայի Հրատարակիմ վրայ . Գրիպայ Պատիւն դիմաց .

Փորագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտօրէն կը կիրարկուին  
մեր աշխատանոցին մէջ կատարեալ ճշգրտութեամբ : Առեւտրական գրասեն-  
եակներու յատուկ ալիստան միջոցներ . ինչպէս՝ Տարիտոն , պիւնկոթիտոն պղինձէ  
եւ քառաչուէ քիւլպրսիք բոլոր քիւլպրսիք եւ այլ որոնք մեր արամագրութեան տա  
կը գտնուին դիւրամատչելի գներով .

Impression en Relief

# GRD. BAR ABBAS

ՇԱՐՍ. ՊԱՊ ԷԼ ՊԱՀՐԻ ՆԱԽԿԻՆ ՖԼԱՇԻՆ ՏԵՂ  
ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԻՔ Օ . ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ

Կոստ Պառ Ապպարսը կոչուած է ըլլայ հաւաքաւայր մը . ճոխ եւ  
ամենամաքուր կահաւորուած .

ՍԳԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՆԱՄԵԱԼ . ԱՐԱԳ ԵՒ ԿՆԱՌԱՒՈՐ .

Կը հրաւիրուին ընտանիքները , իրենց ժամագրաւայրը ընտրել հոն .  
վստահ ըլլալով թէ՛ գոհ պիտի մնան .

Կոստ Պառ Ապպարսը մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմ-  
պելիները՝ լաւագոյն տեսակներէ առաջնութիւն առաջով ԼՕՎԷՆ ՊՐԱԿԻՆ  
համբաւեալ գարեջուրին . Օ՛ն ուրեմն . փութացէ՛ք գէպի Պար Ապպարս .  
Օ . ՓԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ

THE SINGER MANUFACTURING Co



Շարա-էլ-Մըրապի Տալիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինգլերներն են եւ ասոնցմէ  
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է :


400 է աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած . Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանոցիսին մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ .  
ուշադրութիւն դարձնել  
իւրաքանչիւր 'եքենայի  
վրայ Սինգլի ներկայ  
յառկանչիմ



Չրի դասեր և նորոգու-  
թիւններ , յաճախորդաց  
տուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հինքրու-  
նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

Գին ՉԱՓ . . .

ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

## Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ն

« Արշալոյս » ի ամբողջ Ռումա-  
նիոյ գործակալութիւնը ստանձնած  
է Տիար Կ. Փիլիպպոսեան , որուն  
պէտք է զիմել թերթին վերաբեր-  
եալ ամէն գործերու համար .  
Մեր գործակալին հասցէն է ,  
Mr. G. B. Pilibossian  
F. American  
83 St. Mangalia

(Roumanie) Constantza

## ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՎԱՅԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ էլ Ազիզ  
Ապտինի Գարագոլին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գօտիք մը  
աւենալու համար զանազան տեղեր դի-  
մած ու դժգոհ մնացած են , թող ան-  
գամ մը մեր վաճառատունը այցելեն .  
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-  
ուիլ որ՝ եթէ իրենց յանձնարարութիւնը  
նը գոհացուցիչ չ'գտնեն , կանխավճարը  
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ-  
ուելու փափաքողներուն համար , նը-  
պատաստուր առիթ մը պիտի ըլլայ :

Ապտիկ ապսպրանքները նկատու-  
ղութեան շին առնուիք , եւ անոնք որ  
ինձի կը դիմեն , դիւրաւ կրնան ըմբռ-  
նել ապտիկին տարբերութիւնները .  
թէ գործի մաքրութեան եւ թէ գի-  
նիքու մասին .

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Արսօնսէր՝ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Անկախան Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ


## ՏՊԱՐԱՆ

## Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արսօնեայ եգիպտական Կառավարութեան  
Ներքին Գործոց Նախարարութեանէն . ամենամեծ խնամքով կը տպագրէ .

1. — Արսօնեայ Օրաքերէր , Հանդէսներ , Պրօզիւրներ , Պարբերա-  
կաններ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական տարբերակի ամեն ճեւաղ սր-  
պագրական պիտի լինեն՝ ամեն շեղումով .
3. — Յայտարարութիւններ , շրջաբերականներ , նամակաւորութիւններ ,  
Ճապարակներ , Լաւայն .
4. — Հարանակական տպուածքներ . մանաւորներ եւ այցելաբարներ Լաւայն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցէն է , ց'ճոր Տեօրիմոքիլն . Շարա  
Մոնեսմէս Ալի . Սիրասէլ երկարող քրասմէլի զօրին վրայ , Հարթ - էլ  
Մասապէկ - էլ Գասիմէ , թիւ 40 , Տիար Միհնա Շիրիմէանի յարկա-  
րաժմէն մէջ .



1870

1871

1872

1873

1874

1875

1876

1877

1878

1879

